

Առանցքային տնտեսական ցուցանիշների
կոնստրուկտային կանխատեսում և Covid-19-ի
հակազդման պետական աջակցության
ծրագրերի գնահատում

Փորձագիտական հարցման հաշվետվություն



ACSES

ARMENIAN CENTER FOR
SOCIO-ECONOMIC STUDIES

Երևան, Ապրիլ, 2020թ.

Ներածություն

ACSES (Armenian Center for Socio-Economic Studies) վերլուծական կենտրոնը 2020թ-ի ապրիլի 15-22-ը նախաձեռնել է **«Առանցքային տնտեսական ցուցանիշների կոնսենսուսային կանխատեսման և Covid-19-ի հակազդման պետական աջակցության ծրագրերի գնահատման»** փորձագիտական հարցում տնտեսագետների շրջանում: Հարցման մասնակիցների թիվ 16-ն է:

Որպես առանցքային ցուցանիշներ դիտարկվել են՝

- 2020թ-ին 2019թ-ի համեմատ ՀՆԱ-ի իրական ծավալի փոփոխությունը,
- 12-ամսյա գնաճը/գնանկումը 2020թ-ի դեկտեմբերին,
- Դրամ/դոլար միջին փոխարժեքը 2020թ-ի դեկտեմբերին:

Բացի այդ, փորձագետներին առաջարկվել է գնահատել, թե իրենց կարծիքով 2020թ-ին ինչքան պետք է լինի Covid-19-ի հետևանքների հակազդման պետական աջակցության ծրագրերի անհրաժեշտ չափը՝ դրամական արտահայտությամբ, ինչպես նաև՝ կառավարության կողմից արդեն իսկ հաստատված սոցիալական և տնտեսական հետևանքների չեզոքացման ծրագրերի արդյունավետությունը:

Ի հավելումս, փորձագետներին առաջադրվել են պնդումներ Covid-19-ի տնտեսական հետևանքների չեզոքացման կոնկրետ

գործիքակազմերի կիրառման նպատակահարմարության մասին, որոնց վերաբերյալ հարցման մասնակիցները հայտնել են իրենց դիրքորոշումը:

Հարցումն իրականացվել է առցանց: Հարցաշարում ընդգրկվել են բաց հարցեր տնտեսական ցուցանիշների, Covid-19-ի հետևանքների հակազդման պետական աջակցության ծրագրերի անհրաժեշտ չափի վերաբերյալ, իսկ մյուս դեպքերում հարցերը ձևակերպվել են Լայկերտի սանդղակի տեսքով:

Հարցման արդյունքները ամփոփվել են ընդհանրացված՝ առանց մասնակիցների կոնկրետ պատասխանները բացահայտելու:



Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, 001, Մոսկովյան 3/1
Կայք՝ www.acses.am
Էլ. փոստ՝ info@acsces.am
Հեռ. +374 99 041168

Հարցման մասնակիցներ



Բ. Ասատրյան



Վ. Բոստանջյան



Ռ. Գևորգյան



Ա. Եղիազարյան



Զ. Թադևոսյան



Վ. Խաչատրյան



Վ. Խաչատրյան



Մ. Հերգելյան



ACSES
ARMENIAN CENTER FOR
SOCIO-ECONOMIC STUDIES



Թ. Մանասերյան



Հ. Մանասյան



Ա. Մարգարյան



Հ. Միքայելյան



Ս. Պարսյան



Տ. Զրբաշյան



Է. Սանդուկյան



Հ. Ֆանյան

Առանցքային տնտեսական ցուցանիշներ


	ՀՆԱ-ի իրական ծավալի փոփոխությունը 2020թ-ին (տարին տարվա նկատմամբ),%	12-ամսյա գնաճը (2020թ-ի դեկտեմբերին 2019թ-ի դեկտեմբերի համեմատ), %	Դրամ/դոլար միջին փոխարժեքը 2020թ-ի դեկտեմբերին
Միջին	-6.9	2.7	503.9
Առավելագույն արժեք	1.5	9.7	566
Նվազագույն արժեք	-28	-3	485
Ստանդարտ շեղում	8.5	2.8	19.8
Մոդալ միջակայք	[-3; -5.9]	[2; 3.9]	[496; 500]
Միջնարժեք	-4.75	2.75	500
Կոնսենսուսային գնահատական (միջին՝ առանց outlier-ների)	-3.9	1.8	499

Համաձայն փորձագետների կետային կոնսենսուսային կանխատեսման՝ 2020թ-ին Հայաստանում ՀՆԱ-ի իրական ծավալը 2019թ-ի համեմատ կկրճատվի 3.9%-ով, ինչն ավելի ցածր է, քան ՀՀ ԿԲ, ֆինանսների նախարարության, ինչպես նաև միջազգային ֆինանսական կառույցների և վարկանշավորման գործակալությունների վերջին կանխատեսումները: Միևնույն ժամանակ, փորձագետները


կանխատեսում են, որ 12-ամսյա գնաճը կկազմի 1.8%, ինչը թեև ավելի բարձր է, քան նախորդ տարվա ցուցանիշը, սակայն ցածր է ՀՀ ԿԲ թիրախային միջակայքից (4% +/- 1.5%-ային կետ): Նման պատկերը կարող է պայմանավորված լինել դրամի արժեզրկմամբ: Համաձայն կոնսենսուսային կանխատեսման՝ 2020թ-ի դեկտեմբերին դրամ/դոլար միջին փոխարժեքը կլինի 499՝ 4.3%-ով ավել, քան 2019թ-ի դեկտեմբերին:

Covid-19-ի հակազդման պետական աջակցության ծրագրեր

Սոցիալական հետևանքների չեզոքացման ծրագրերի համալիր [1-ընդհանրապես արդյունավետ չէ, 5-լիովին արդյունավետ է]



Տնտեսական հետևանքների չեզոքացման ծրագրերի համալիր [1-ընդհանրապես արդյունավետ չէ, 5-լիովին արդյունավետ է]




Անդրադառնալով **Covid-19-ի սոցիալ-տնտեսական հետևանքների չեզոքացման պետական աջակցության**՝ մինչև հարցման պահը հրապարակված, ծրագրերին նշենք, որ սոցիալական հետևանքների չեզոքացման ծրագրերի համալիրի արդյունավետության միջին գնահատականը 5-բալանոց սանդղակով կազմել է 3.1: Համեմատության համար՝ նույն գնահատականը **տնտեսական հետևանքների չեզոքացման ծրագրերի համալիրի** վերաբերյալ եղել է 2.5: Այլ կերպ ասած, հարցման մասնակից փորձագետները կարծում են, որ կառավարության հրապարակած Covid-19-ի սոցիալական հետևանքների չեզոքացման ծրագրերի համալիրն ավելի արդյունավետ կլինի, քան տնտեսական հետևանքների չեզոքացման ծրագրերի համալիրը:


Փորձագետներին առաջադրվել է նաև հետևյալ հարցը. «Հաշվի առնելով մեր հրականությունը՝ ըստ Ձեզ 2020թ-ին որքա՞ն պետք է կազմի կորոնավիրուսի հետևանքների հակազդման պետական աջակցության ծրագրերի ընդհանուր մեծությունը, որպեսզի տնտեսվարողների և բնակչության խոցելի խմբերի համար բացասական հետևանքները հնարավորինս չեզոքացվեն»: Պետք է նշել, որ պատասխանների **միջինը եղել է 395 մլրդ դրամ**, իսկ առավել հաճախ այդ պատասխանը ընկել է մինչև 300մլրդ դրամի միջակայքում:

Դիրքորոշումը պետական աջակցության առանձին մեխանիզմների վերաբերյալ


Պետությունը պետք է նվազեցնի կամ զրոյացնի որոշ հարկատեսակների դրույքաչափերը առավել տուժած տնտեսական գործունեության տեսակների համար




Պետությունը պետք է հետաձգի հարկերի վճարումը տնտեսության առանձին ոլորտների տնտեսավարող սուբյեկտների համար



Պետությունը պետք է առանց միջնորդների՝ հետվերադարձի պայմանով, փոխառություն տրամադրի առավել տուժած տնտեսավարող սուբյեկտներին




Պետությունը պետք է բաժնեմասնակցության սկզբունքով մասնակցի նոր ձեռնարկությունների հիմնադրմանը




Դիրքորոշումը պետական աջակցության առանձին մեխանիզմների վերաբերյալ

Պետությունը պետք է սահմանի **ամորտիզացիայի ավելի կարճ ժամկետներ նոր կապիտալ ներդրումների համար**



Կոնսենսուսային դիրքորոշումը քանակական արտահայտությամբ
[-2- ընդհանրապես համաձայն չեմ, 2- լիովին համաձայն եմ]



Տնտեսավարող սուբյեկտներին աջակցելու առանձին մեխանիզմների վերաբերյալ փորձագետների դիրքորոշումը պարզելու համար, նրանց են ներկայացվել հետևյալ մեխանիզմները՝

- Տնտեսական գործունեության առավել տուժած տեսակների համար որոշ հարկատեսակների դրույթաչափերի նվազեցում կամ զրոյացում (I),
- տնտեսության առանձին ոլորտների տնտեսավարող սուբյեկտների համար հարկերի վճարման հետաձգում (II),
- առանց միջնորդների՝ հետվերադարձի պայմանով, փոխառություն տրամադրում (III),
- բաժնեմասնակցության սկզբունքով նոր ձեռնարկությունների հիմնադրմանը մասնակցություն (IV),
- նոր կապիտալ ներդրումների համար ամորտիզացիայի ավելի կարճ ժամկետների սահմանում (V):

Ինչպես ներկայացված է վերջին գծապատկերում, առավել մեծ կոնսենսուս կա մեխանիզմ (II)-ի և (IV)-ի շուրջ: